

բեային ժամացույցի ի Հայս թուի ի ժամանակս Արշակունեան Արտաշիսի Բ. արքայի մերոյ ձեռամբ Վահուհի քրմուպետաց, որք ըստ աւուր պաշտածի ժամաչափութեամբն պաշտօն տանէին պէսպէս կռոց պաշտելոց ի Հայաստան մինչև ցծագումն Քրիստոնէութեան: Որպէս գրէ Մովսէս Խորենացի գիրք Բ. Գլ. ԾԹ. «այսպիսի գիտութեանց կամ անփոյթ արարեալք, և կամ ոչ հասեալ, զաւարտեալ անկա՛մ և զամսոց և զտարերոց բոլորմանց. քանզի ոչ այսպիսի ինչ ճանաչիւր առ նոսա: Եւ այս ամենայն յօրինի յաւարս Արտաշիսի»: 1

Ասին թէ նախ՝ Անուքսիմանդր հնարեաց զայս ժամաչափ ի վեցերորդ դարուն նախ քան զԾնուդն Քրիստոսի. թէպէտ Յոյնք բազում հնարիք ջանացին սեպհականել ինքեանց զայս արժանայիշատակ գիւտ: Սակայն առաւել հաւանական է, թէ նախ Եգիպտոցիք հնարեցին զայս աստղաբաշխական հետաքննութեամբ իւրեանց: Իսրայէլացիք ևս 700 տմօք նախ քան զՔրիստոս, ծանօթ էին արեգակնային ժամացուցին Աքազու և յայտ իսկ է, թէ նոքա առեալ էին յեգիպտոսէ ի գործածութիւն շափելոյ զժամս աւուրց: 1

(1) Եւրոպայի 17-րդ դար:

Ռուստամ Բէկ Երզնկեանց:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Բաղճարդիւն Խճադրութեան Արարատի ամառանոց:

Յուսալով՝ որ Արարատ լեռան հովիտների և ստորոտների նորանոր գիւտոց արտադրութեամբ, խօսքս բեկեռած արձանագրութեանց մասին է, (չեմ ասում՝ զանազան հանքային հարստութեանց համար, որք գեո ժամանակի և ընկերական ձեռնարկութեանց պէտք ունին,) կարող եմ զարգարել Արարատ ամառանոցի էջերը՝ Արարատեան թագաւորութեան երբեմն փայլած փառքը արտայայտելու ցանկութեամբ (Երեմիա մարգարէ՝ ԾԱ. 28), ի լոյս ածելով երջանիկ նախնեաց մեզ աւանդած հոգիներից նշխարհներն — բեկեռած արձանագրութիւնքն Արարատեան նահանգի, որ բարեբաղտաբար իրրե թարգման նոցա ժամանակի զգացմանց և սրտից լինիմ ես. սպագրութեամբ ի լուր աշխարհի հրատարակելով զայնս. Աւ այս իսկ պատճառաւ ահա գրութեանս հետ յանձնեմ խմբագրութեանդ ի հրատարակութիւն Թ. և Ժրդ արձանագրութիւնքն Արմաւրայ, և Բրդ արձանագրութիւնքն Յօլակերտի:

Արմաւրայ Թ. արձանագիրը շրջապատուած է դօտւոյ նման՝ արձանաքարի

չորս կողմովն, ինչպէս ահա կտեսնէք գրութեանս ներքոյ և է միայն մի տող, որ գտնվել է Սուրմալուայ գաւառի Ղաղանչի Պարսիկ գիւղումն՝ Երասխի միւս ափին (աջափին), Արմաւրայ հանդէպն. և Արմաւրայ Ժ. արձանագիրը բաղկացած է 13 տողից, որ նոյնպէս գրութեանս ներքեւ կտեսնէք. որն գտնուեց Արմաւրայ բլրի հարաւային ստորոտումն, իսկ Յօլակերտի Բ. արձանագիրն է 11 տող. որ գտել էր Տաշրուտունցի Պ. Մատթէոսն Մկրտչեան՝ Բոյաթ—Թօփանշալու պարսիկ գիւղի մօտ եղած Գաւութլու անուամբ հողարլրակի ներքեւ՝ Յօլակերտի հանդէպն. և իմացնելով մեզ ընդ ձեռն Պ. Մակար Տէր Վարդանեանի (Վաղարշապատայ Տէր Վարդանի փեսայն) հրաւիրեց գնալ, օրինակելու ուստի և մեր հոգեւոր եղբայր Գերապատիւ Սարգիս եպիսկոպոս Տէր Գասպարեանի հետ միասին գնալով ի Տաշրուտուն գիւղն օրինակեցինք առ զրան յիշեալ Պ. Մատթէոսի, և սպլորդի վարձը տալով խնդրեցինք զայն ուզարկել յԵջմիածին, Այս արձանագրութեան միւս երեսին սանդ է փորուած, Այս արձանագրութեանց առաջին երկուսը նամակիս հետ Յուլիսի 10 ին, իսկ վերջին Յօլակերտինը Սեպտեմբերի 1 ին ուղարկեցի Պ. Քերսովրէ Պատկանեանին Հայազգի Պրաֆէսսօրին թարգմանելու համար, նմանապէս և Գերապատիւ Սարգիս եպիսկոպոսից օրինակած Մաստարայի արձանագրութեան օրինակն, որից և ստացայ պատասխան ի 27 նոյն ամսոյ զրած նամակաւն, որոյ մէջ կասէ



« 2երդ Սրբազնութիւն

« Նոր վերադարձած արտասահմանից, ուր որ վերջի ժամանակը Վիէննայ էի, այնտեղ այդ ժամանակ 7 երորդ միջազգային արեւելագիտաց ժողովն էր, Խօսք եղաւ նոյնպէս մեր Հայոց բեւեռածե արձանագրութեանց վերայ և եւ 2եր արդեանց մասին խօսեցայ շատերի հետ:

« Ստացայ 2եր նամակը և հետը 3 արձանագրութիւնք, (2ը Արմաւրայն և մին Յօլակերտին) Առաջինների պատճէնը ուղարկեցի Վիէննայ և Լօնդօն ի գիտութիւն այլոց, իսկ թարգմանելը դեռ անկարելի է, որովհետեւ պակասորդ է և շատ նոր նշանադրեր կան մինչև ցայժմ անյայտ, գալով Յօլակերտի նոր արձանագրութեանը, որ Մենուաս թագաւորին է, պէտքէ ասել, որ ըստ ի պակասաւոր և եղծուած լինելուց՝ լուսանկարով օրինակուած չէ: Մենուաս թագաւորի հօր անունը պէտք էր լինել Իսրուլինիս, իսկ այստեղ այդ անունը չի պատահում. ուրեմն կամ անշուշտ պէտքէ լուսանկարուի, կամ շատ ճիշտ օրինակուի կրկին մեծ հոգացողութեամբ:

« Մաստարայի արձանագրութիւնը մի նոր տեսակ պէտքէ լինի, եթէ որ և իցէ ճշտութիւն կայ պատճէնի մէջ, ուրեմն դուք որ հմուտ էք այդ կերպի աշխատութեանց, պէտքէ անձամբ այդ անղերը լինիք և 2եր աչօք տեսածը օրինակէք (գերադասելի է լուսանկարը) և այն ժամանակ միայն կարելի է հաւատ ընծայել: Ծանկալի կլինէր եթէ կարողանայիք Գերապատիւ Սարգիս եպիսկոպոսի աշխոյժը զարթեցնել այդ օրինակ աշխատանքի իրան ազատ ժամերը նստիլով, շատ լաւ կանէիք »:

Իսկ երկրորդ նամակի հետ ի 14 Հոկտ. ուղարկել է Արմաւիրեան Թ. մի




տող բոլորչի գրուած արձանագրոյ թարգմանութիւնն և ժրգի օրինակն մի քանի կասկածաւոր բառերը նոյն իսկ արձանագրոյ ուղղագրելոյ համար, որոյ նամակի պատճէնն է ըստ այսմ՝

« Չերդ Սրբազնութիւն

« Ուղարկումամ Չեղ ժրգ Արմաւրայ արձանագրութեան օրինակը (ձեռքս գրած)՝ ինչքան որ կարելի էր վերականգնել (ուղղագրել իսկական գաղափարից) առանց լուսանկար պատճէնի։

Այս կերպի թէև առանց թարգմանութեան կարելի է տպել Արարատի թերթերում ի գիտութիւն ցանկացողաց, եթէ միայն իմ գծագրած օրինակը հասկանալի լինի գրաշարին։

Թ.րգ բոլորակ արձանագրութիւնը դիւրին է, զոր օրինակ



« Եթէ բեւեռագիրն այսպէս է, թարգմանութիւնն այս է՝ *) .

« Խալդեայ հղօրի Արգիստիս Մենուասայ որդի շինեաց զայս » :

« Ժրգ արձանագիրը նոյնպէս Արգիստիսինն է, ինչպէս արդէն գրել էի, իսկ վերջինը այսինքն Յօլակերտի Բրգը Իսրուինին է և շատ հետաքրքիր, թէև պակասաւոր, սպասումներ լուսանկարի օրինակին, Թէև այս կարճ արձանագրութիւններն ևս իւրեանց նշանակութիւնն ունին, բայց ցանկալի

(*) Պ. Պատկանեանի գրուածն համեմատ է իսկականին. բացի սյս եեք բա-

ռերից   և  որք փակագծի մէջ են առած, որոց

առաջինը չկայ Պատկանեանի օրինակի մէջ. երկրորդը այսպէս է գրել

Պատկանեանը, իսկ երրորդը այսպէս  

կլինէր, եթէ պատահէին առաւել բազմատողները և մեծերը՝ որոց մէջ պատմական մի անցք նկատուի, և ոչ թէ որեւիցէ բարեպաշտ արարմունք կամ զոհ Աստուծոց, Նոյնպէս խնդրեմ ուշադրութիւն դարձնէք Սարգիս Եպիսկոպոսի արձանագրութեան վերայ, գուցէ ճշմարիտ տառեր լինին»:

«Ինչ գոնէ այն թերթերը Արարատի ուղարկեցէք, որ այս արձանագրութիւնը տպւին»:

Սպասելով . . . մնամ և ըն

Ք. Պատկանեանց »:

Պ. Ք. Պատկանեանի գրուածից իմանալով՝ որ յիշեալ արձանագրութեանց թարգմանութիւնը դժուարութեամբ և ուշ ձեռք կրերվի, և ցանկալով այսպիսի արձանագրութեանց պատճէններն տպագրութեամբ հրատարակել ի զիտութիւն հնախոյզ անձանց և ընկերութեանց, որ անյայտ չմնան ցանկացողներից՝ (թէ և շատ ցանկալի է իւրաքանչիւրի թարգմանութիւնն ևս հետը տպել) ուստի բարեռք համարեցի Արարատ ամսագրիդ միջոցաւ տալ ի տպագրութիւն ինչպէս և Պ. Պատկանեանցն ևս ցանկացել է:

Իսկ Գերապատիւ Սարգիս Եպիսկոպոսի համար համարձակ կասեմ, որ նորա աշխոյժը ինքնին զարթնած է այսպիսի գրաւոր աշխատութեանց ուսումնասիրելու վերայ. միայն թէ ժամանակ տրվի աշխատելու: Յօլակերտի և Մաստարայի արձանագրութեանց նորից օրինակելն կամ լուսանկարով առնելն մնաց առաջիկայ գարնանն, եթէ Աստուած յաջողէ:

Պ. Ք. Պատկանեանի պահանջման համաձայն Արմաւրայ ժրդ արձանագիրը նոյն իսկ արձանագրարի գրուածքի հետ համեմատելով (որ զբաժ է ձեւարանի հարաւային հանդէպն) գտի իմ օրինակածին համաձայն. բացի

հետեւեալ բառերից, զօ. 1 տողի վերջին բառը  2րդ տողի

առաջին բառը  և 3 տողի վերջին բառը 

զորս ուղղեցի. իսկ Պ. Պատկանեանի գրածի հետ քանի բառերով տար-


բեր. զօ. 2. 5. 6. և 9. տողերի մէջ իսկականը այսպէս է 

բայց Պ. Պատկանեանը գծագրել է այսպէս  7րդ տողի

մէջ 3 բառի իսկականը այսպէս  իսկ Պ. Պատկանեանին

նինը այսպէս.  9րդ տողի 4րդ բառի իսկականը այս-

պէս  իսկ Պ. Պատկանեանին այսպէս 



Իսկ Մաստարայի արձանագրի առոերը կամ գծերը այսպէս են՝ ըստ ճիշտ
գծադրութեան Աղէքսանդրապօլցի Արժ. Մեսրոպ քահանայի Գեօնջեանց,

ՄԵՍՐՈՒԹ ԵՊԻՍԿՈՓՈՍ ՍՄԵԱՏԵԱՆՑ.

Ի 1 Ն Նոյեմբերի, 1886

ԳԻՒՂԱՅՈՒ ՅՈՅԱԸ.

Թէ պայծառ արեւն դէպ հարաւ իջաւ,
Ու իւր հրաժեշտը բոյսերին տուաւ,
Յուսով եմ դարձեալ՝ նորից պէտք է գտայ,
Եւ մեր գաշտերին սիրով բարեւ տայ:
Թէ մայր երկիրը զրկուեցաւ զարդից,
Ու զրկեց մեզ էլ շատ պարգևներից,
Յուսով եմ դարձեալ, նորից կարժնանան՝
Մեր ձիւնով ծածկուած անդ ու անդաստան:
Թէ կանաչ թուփն էլ կարմիր վարդի հետ,
Թողեց մեզ չոր փուշ, ու եղաւ անհետ,
Յուսով եմ դարձեալ, մի օր կը բացուի՝
Մեր պարտէզներն էլ հոտով կը լցնի:
Թէ թռաւ սոխակ մեր այգիներից,
Եւ զրկեց մեզ իւր քաղցր երգերից,
Յուսով եմ դարձեալ վարդն ու վարդարան՝
Սոխակի երգոց արձագանք կը տան:
Թէ հողմ՝ և մրրիկ եղեամն անընդհատ,
Խամրեցին բոյսեր՝ տեղաց ձիւն առատ,
Յուսով եմ նորից կպարզուի երկին՝
Եւ նոր սիրտ կառնէ ժիր, քաջ գիւղացին,
Թէ հիւսիս քամուց սասեց գետ, առուակ,
Եւ չէ ճուռողում սիրունն սարեակ,
Յուսով եմ նորից իւր գայլայիկով
Աւետիք կարգայ՝ զայն ձայն տալով:
Յուսով եմ կրկին, որ գոմէշ գոթման՝
Գուրս պէտքէ հանեմ ու գաշտը երթամ:
Ահօս կը բանամ, արտս կը հերկեմ՝
Եւ Տէր Աստուծուն՝ միշտ փառս կերդեմ:
Գրաշար Ներսէս Տէր Աւետիբեանց: